

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Նաիրա Մարտինի Այվազյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 266 534 100 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

- 2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,
- 2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - 2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - 2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
 - 2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

- 2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
- 2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
- 2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 266 534 100 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

- 4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:
- 4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

- 5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

- 9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
- 9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:
- 9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


Կոմիտե

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե

ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
Հ/հ՝ 900011033033
ՀՎՀՀ՝ 02704199

ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


(ստորագրություն)

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կ. Ս.

Ծրագրի գիտական ղեկավար՝


(ստորագրություն)

Կազմակերպություն

ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ»
ՊՈԱԿ

Հայաստան, ք.Երևան, Օրբելի Եղբ. 22,

Հ/հ՝ 900018005620

ՀՎՀՀ՝ 00008543

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Կազմակերպության տնօրեն (ղեկավար)


(ստորագրություն)

Այվազյան Նաիրա Մարտինի

Այվազյան Նաիրա Մարտինի


**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Նաիրա Մարտինի Այվազյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-17/26-IS/INSTPHYSIOL պայմանագրի գնի վերաբերյալ՝ 266 534 100 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե

Գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող՝


(ստորագրություն)



Կ. Տ.

Կարեն Բորիսի Ղարիբյան

Կազմակերպություն

տնօրեն (ռեկտոր)՝


(ստորագրություն)



Կ. Տ.

Նաիրա Մարտինի Այվազյան

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի


Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	45
Այլ պարբերականում հրապարակում՝	10
Գրքեր, մենագրություններ՝	1
Գիտաժողովի նյութեր՝	95

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


(ստորագրություն)

Նաիրա Մարտինի Այվազյան

Կազմակերպության գիտքարտուղար՝


(ստորագրություն)

Երզնիկա Բրիտանիա
Այվազյան



ՆԱԽԱՀԱՇԻՎ
 «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	247 786 449	49 557 289	61 946 612	61 946 612	74 335 936
2.	տնտեսական ծախսեր՝	12 734 272	2 546 854	3 183 568	3 183 568	3 820 282
3.	այլ ծախսեր՝	6 013 379	1 202 675	1 503 344	1 503 344	1 804 016
Ընդամենը՝		266 534 100	53 306 818	66 633 524	66 633 524	79 960 234

Կազմակերպության տնօրեն (ոեկտոր)՝


 (ստորագրություն)

Նաիրա Մարտիրոսյան Այվազյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝


 (ստորագրություն)

Արսեն Մասցականի
 Հովհաննիսյան



ԱՌԱՋԱԴՐԱԼՔ

« Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը » ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Ուսումնասիրել նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկ, շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման խորքային մեխանիզմները՝ ժամանակակից էլեկտրոֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և մոլեկուլյար մոդելավորման մեթոդներով, ինչպես նաև՝ արդի կենսապատկերավորման զանազան մոտեցումների կիրառմամբ:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական հետազոտությունները նվիրված են կենտրոնական, վեգետատիվ և ծայրամասային նյարդային համակարգերի գործունեության հիմքում ընկած ֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտման ու համապատասխան բնագավառներում ներդրման հարցերին: Ինստիտուտը՝ հանդիսանալով ֆիզիոլոգիական հետազոտությունների կոորդինացնող կենտրոն ՀՀ գիտակրթական համայնքում, պարտավորվում է նշված ուղղությամբ իրականացնել հեռանկարային ու ցպահանջ հետազոտություններ: Ինստիտուտի խմբերի ուսումնասիրությունները մեծամասամբ լիովին վերածածկում են նյարդաֆիզիոլոգիայի հիմնական ուղղությունները, ներգրավելով նաև ժամանակակից մոլեկուլային կենսաբանական, կենսաֆիզիկական և մանրադիտման մեթոդական մոտեցումները՝ էլեկտրոֆիզիոլոգիա, նյարդադեգեներատիվ և քաղցկեղային պաթոլոգիաների կենդանական մոդելներ, վարքագծային թեստեր, արհեստական թաղանթների ձևավորում, լուսային, ֆազ-կոնտրաստ, ֆլուորեսցենտային, էլեկտրոնային, ատոմային-ուժային և կոնֆոկալ մանրադիտում, հյուսվածքների աճեցում բջջային կուլտուրաների միջոցով, ինչպես նաև հիպերսպեկտրալ և տրանսմիսին էլեկտրոնային կենսապատկերավորման մեթոդներով: Հեռանկարային մոտեցումներից է դեղորայքների նախատիպերի սքրինինգը 3D-AI միջոցով, մոլեկուլային դինամիկ սիմուլիացիաների կիրառումը ֆիզիոլոգիական որոշ պրոցեսների մեխանիզմների բացահայտման համար: Նոր ուղղություններից են նեյրո- և ոսկրային իմպլանտների կիրառումը և իմունոթերապևտիկ հետազոտությունների ներգրավումը:

4. Աշխատանքի բովանդակությունը:

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական փորձաքննությունը ավանդորեն վերածածկում է նյարդաֆիզիոլոգիայի և նեյրոգիտությունների ոլորտը: Դրա հետ մեկտեղ աշխատանք է տարվում դասական մեթոդաբանության արդիականացման և նոր մոտեցումների մշակման ուղղությամբ: Լինելով Հայաստանի ֆիզիոլոգիական կենսաբժշկագիտական առավել խոշոր կառույցը՝ Ինստիտուտը զարգացնում է նաև այլ ժամանակակից ուղղություններ, ինչպիսիք են կենսաֆիզիկան, հյուսվածքային ինժեներիան, թունաբանությունը, կենսաինֆորմատիկան և կենսապատկերավորման տարբեր ուղղությունները:

Նյարդաֆիզիոլոգիայի ուղղությամբ իրականացվելու են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- շարունակել ուսումնասիրություններ նեյրոդեգեներատիվ, այն է՝ Պարկինսոնի հիվանդության (ՊՀ) և Ալցհեյմերի հիվանդության (ԱՀ) զարգացման մեխանիզմները գնահատելու, ինչպես նաև մի շարք նյարդապաշտպան ակտիվ միացությունների (բուսական, մանրէաբանական, կենդանական և սինթետիկ ծագում ունեցող) ազդեցությունը տվյալ պայթյունների կենդանական մոդելների վրա: Կկիրառվեն կենդանիների վարքագծային թեստեր՝ համապատասխան ծրագրային մշակմամբ: Բացի այդ, այս մոդելները կօգտագործվեն նյարդային հյուսվածքի և աղիների կենսաքիմիական վերլուծությունների, ինչպես նաև ձևաբանաչափական հետազոտությունների նպատակով՝ ուղեղի միկրոանոթային հունի վիճակը գնահատելու նպատակով:

- կհետազոտվեն նաև հիշողության հայտնի կառույցների և դրանց փոխադարձ հարաբերությունների փոփոխությունները՝ ԱՀ մոդելի վրա ուղեղի էնտորինալ կեղևի ուսումնասիրությամբ:

- կշարունակվի ողնուղեղի պարանոցային և գոտկային հատվածներ ուղորդվող ցանցա-ողնուղեղային նեյրոնների ռեակցիաների մանրակրկիտ էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտությունը՝ ի պատասխան ուղեղիկի կեղևի աուրիկուլյար բլթակի գրգռման: Խնդիրն է՝ իրականացնել ուղեղիկի կողմից արգելակվող միջակա ցանցաձև գոյացության ողնուղեղի պարանոցային և գոտկային հատվածներ ուղորդվող նեյրոնների քանակական և որակական հետազոտություն:

- հարթ մկանային հյուսվածքի ֆիզիոլոգիայում հետազոտական նպատակն է՝ այդ մկանային հյուսվածքում ինքնաբուխ էլեկտրական ակտիվության ծագման մեխանիզմների բացահայտումը, ուսումնասիրել արգանդի փողերում, արգանդում և արգանդի վզիկում տեղայնացված տարբեր ինքնավար ռիթմածին շրջանների փոխազդեցության մեխանիզմները, որոնք ապահովում են ոչ հղի առնետների ամբողջ օրգանի ֆունկցիոնալ գործունեությունը:

- նեյրոներգատչական փոխհարաբերությունների ուսումնասիրությունների շրջանակներում շարունակվելու են ինսուլինով հրահրված կրկնվող հիպոգլիկեմիայի ժամանակ գլխուղեղի տարբեր բաժինների հարմարվողական/պլաստիկ հնարավորությունների հետազոտությունները: Հիպոգլիկեմիայի ժամանակ առնետների գլխուղեղի նեյրոնային շղթաների դիսֆունկցիայի էլեկտրաֆիզիոլոգիական առանձնահատկությունները կգնահատվեն նաև մեղրախոտի կիրառմամբ:

Հյուսվածքային ինժեներիայի ուղղությամբ ենթադրվում են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- բնութագրել ստացված ոչ իմունոգեն, կենսահամատեղելի մաշկի սկաֆոլդները, որոնք կձառայեն որպես մաշկի փոխարինիչ փոխպատվաստման համար: Կօգտագործվեն մեքենայական ուսուցման մեթոդներ՝ սկաֆոլդի օպտիմալ պարամետրերը սահմանելու համար:

- ուսումնասիրել և գնահատել ապաբջջայնացված սկաֆոլդների ցիտոտոքսիկությունը, մնացորդային դետերգենտների, այլ հայտնի իմունոգենների քանակը տարբեր հյուսվածքների հենարաններում:

- կատարելագործել նյարդային հյուսվածքի իմպլանտների ստացման մեթոդները՝ համադրելով հյուսվածքային ինժեներիայի մեթոդները մի քանի առաջադեմ տեխնոլոգիաների հետ:

- ուսումնասիրել ստացված լյարդի հենարանների իմունոգենությունը, T լիմֆոցիտների *in vitro* տարբերակման մեթոդով:

- ստանալ և բնութագրել բնական ապաբջջայնացած առնետի երիկամի սկաֆոլդ որպես առաջին էական քայլ ամբողջական օրգանը վերստեղծելու համար:

- փորձարկել 3D-կենսատպագրությամբ ստացված ոսկրային իմպլանտների սերտաճումը բնական հյուսվածքի հետ՝ կենդանական մոդելներում:

Մարդու հոգեֆիզիոլոգիայի ուղղությամբ իրականացվելու են հետևյալ ուսումնասիրությունները.

- գնահատել նոր մշակված ԷՌԻԳ բարձր հաճախականության օսցիլյացիաների հայտնաբերման ալգորիթմը, որը կարևոր է էպիլեպտիկ օջախների տեղայնացման հայտնաբերման համար::

- իրականացնել մարդու տարբեր հուզական վիճակների ֆիզիոլոգիական կորելյատների բացահայտման ուսումնասիրություններ՝ հիմնված բազմամոդալ ֆիզիոլոգիական ցուցանիշների վերլուծության վրա:

- գնահատել հետպատերազմային սթրեսների արտահայտվածության աստիճանը և ուսումնասիրել դրանց վեգետատիվ դրսևորումների հոգեֆիզիոլոգիական կորելյատները պոլիգրաֆիկ գրանցման միջոցով:

- մշակել մարդու էմոցիաների ավտոմատ ճանաչման համակարգ՝ հիմնված ֆիզիոլոգիական ազդանշանների վերլուծության վրա:

- ստեղծել կրելի բազմաչափ կենսաբժշկական տվյալների հավաքագրման սարքի նախատիպ, որը օժտված կլինի սրտի բաբախումների, մաշկի ջերմաստիճանի, մաշկի դիմադրության և շարժման սենսորներով, որոնց տվյալները կփոխանցվեն սմարթֆոնի նորամշակ հավելվածին՝ հետագա մշակման համար:

Թունաբանական հետազոտությունները ուղղությամբ ենթադրվում են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- հայկական իժի խայթոցի դեմ ստացված մոնոկլալենտ, ֆունկցիոնալ և բարձր էֆեկտիվ հակաթույնի նախակլինիկական թեստավորումը:

- շարունակել նախկինում ստացված անդրկովկասյան գյուրգայի խայթոցի դեմ հակաթույնի կիրառումը վետ.կլինիկաներում, ինչպես նաև տարեկան կտրվածքով ՀՀ

կլինիկաներում գյուրգայի խայթոցի զոհ մարդկանց քանակի և վիճակի մոնիթորինգը՝ շուկայում առկա ուզբեկական հակաթույնով բուժման ընթացքում:

- հետազոտել ազդեցության մեխանիզմները՝ հակացավային, հակաբորբոքային ազդեցություն ունեցող ընտրված կենդանական թույների բաղադրամասերի և էնդեմիկ դեղաբույսերի հիման վրա ստեղծված նոր դեղամիջոցի քսուկ և պատշտարբերակների համար:

- մշակել բարձր ազդեցություն ունեցող հիպերիմուն շիճուկ, որը կունենա կիրառական նշանակություն հիպերիմունոգլոբուլինների արտադրության մեջ՝ անտիբիոտիկների նկատմամբ կայուն ստաֆիլոկոկային վարակների դեպքում որպես պասիվ իմունոթերապիայի մեթոդ:

- գնահատել վերը նշված նյութերի կիրառման ժամանակ օրգանիզմի ֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունները, տարբեր օրգանների միկրոշրջանառության փոփոխությունը, գլխուղեղի հյուսվածքում միկրոգլիալ բջիջների ակտիվության փոփոխությունը, կենդանիների վարքագծային դրսևորումները:

Կենսաֆիզիկական հետազոտությունները ուղղությամբ ենթադրվում են հետևյալ խնդիրների ուսումնասիրությունները.

- կիրականացվի բնության մեջ առավել կարևոր կենսական գործառույթներ իրականացնող սպիտակուցների հետազոտություն՝ միահատ մոլեկուլների ուժային սպեկտրոսկոպիայի և հաշվողական մեթոդների կիրառմամբ:


- կուսկումնասիրվի տարատեսակ նանոմասնիկների տոպոգրաֆիկ պարամետրերը և դրանց փոխազդեցությունը արհեստական լիպիդային թաղանթների հետ:

- կգնահատվեն՝ մարդու արյան խմբերը բնորոշող հակազենների առկայության պարագայում, էրիթրոցիտների թաղանթի պլաստիկ հատկությունների յուրահատկությունները:

- կշարունակվի նոր 4D հիպերսպեկտրային պատկերավորման գործիքների մշակում՝ տարբեր կլինիկական համապատասխան թիրախների և պաթոլոգիական պայմանների պատկերավորման և քանակականացման համար:

- մեքենայական ուսուցման մեթոդներով կմշակվի սպիտակուց-լիզանդ-լիպիդային թաղանթ փոխազդեցության էներգետիկ պատկերը և կապման մոլեկուլային մեխանիզմները՝ օգտագործելով ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ և ԵՊՀ գերհամակարգչային կենտրոնի հնարավորությունները:

Կազմակերպության
տնօրեն (ոեկտոր)

 (Նաիրա Այվազյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝

 (Նաիրա Այվազյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)



ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

« Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը » ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (1 փուլ)	Ուսումնասիրել օրգանիզմի շարժողական ֆունկցիաների կենտրոնական կազմակերպման ինտեգրատիվ և պլաստիկական մեխանիզմները՝ հիմնարար հետազոտություններ՝ գուգորդված կիրառական բլոկով:	Փորձերի կատարում արևեստների, մկների, ճագարների և բջջային կուլտուրաների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական մաթեմատիկական և այլ ընտրանքային մեթոդներ:	Հունվար-մարտ 2026թ.
2	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (2 փուլ)	Ներկենդանական (ինտրավիտալ) մանրադիտման փորձարարական դասընթացներ արտերկրից հրավիրված մասնեգետի կողմից: Մթերս և Վարքագիծ միջազգային գիտաժողովի կազմակերպում:	Փորձերի կատարում արևեստների վրա կիրառելով ժամանակակից նուրբ վիրաբուժական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիոլոգիական և կենսապատկերավորման տարբեր մեթոդներ:	Ապրիլ-հունիս 2026թ.
3	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (3 փուլ)	Հիմնարար հետազոտություններ՝ գուգորդված կիրառական բլոկով և ուսումնական ակտիվությամբ (կենսապատկերավորման ամառային միջազգային դպրոց)	Փորձերի կատարում էքսպերիմենտալ կենդանիների վրա՝ կիրառելով ժամանակակից էլեկտրաֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիոլոգիական և այլ մեթոդներ:	Հուլիս-սեպտեմբեր 2026թ.
4	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (4 փուլ)	Հիմնարար հետազոտություններ՝ գուգորդված կիրառական բլոկով: Կենսապատկերավորման և կենսաֆիզիոլոգիական դասընթացներ: Հաշվետվությունների շրջան:	Փորձերի կատարում էքսպերիմենտալ կենդանիների վրա՝ կիրառելով ժամանակակից կենսապատկերավորման, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիոլոգիական և այլ մեթոդներ:	Հոկտեմբեր-դեկտեմբեր 2026թ.

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝  (____ Նաիրա Այվազյան ____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝  (____ Նաիրա Այվազյան ____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

